ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք,
Կոտայքի մ. գ. Գեղադիր 4-փ 4-րդ շենք,հեռ 094248414<tamar-mudoyan@mail.ru>

N 51
18 հունիս 2013թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿՈՎԱԼԵՆԿՈ ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ,

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ 3-րդ մասի հոդվածի 8-րդ կետի պահանջով,Ձեզ է ուղարկվում Գեղադիր համայնքի ավագանու 2013թվականի հունիսի 13-ի հերթական նիստի որոշումները էլեկտրոնային եղանակով:

Առդիր 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Թ. Մուդոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր,4-րդ փողոց,4-րդ շենք հեռ094248414 <tamar-mudoyan@mail.ru>

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2013թվականի N 20-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Գեղադիր համայնքի 2013թ հունիսի 13 -ի հերթական նիստի օրակարգը՝

1.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասին

2.Գեղադիր համայնքի ղեկավարի հանրությանը ներկայացվող հաշվետվության քննարկում

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր,4-րդ փողոց,4-րդ շենք հեռ094248414<tamar-mudoyan@mail.ru>

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2013թվականի N 21-Ն

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի պահանջովև հիմքընդունելով <<Հողերի ժամանակավոր սխեմաները համաձայնեցնելու միջգերատեսչական Հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 9-ի N21 դրական եզրակացությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, Գեղադիր համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիների սեփականություն հանդիսացող 0234հա /ծածկագիր 0135-028/ գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրի հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա:
2.Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված, տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը վճարելուց հետո /եռամսյա ժամկետում/,որը կազմում է 1895400/ մեկ միլիոն ութ հարյուր իննսունհինգ հազար չորս հարյուր /դրամ:
3.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել Անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին և Կոտայքի մարզպետարան:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր,4-րդ փողոց 4-րդ շենք հեռ094248414<tamar-mudoyan@mail.ru>

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2013թվականի N 22

ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերը՝ համայնքի ավագանին որոշում է.

Ի գիտություն ընդունել համայնքի ղեկավարի հանրությանը ներկայացրած հաշվետվությունը համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Գեղադիր համայնքի ավագանու
2013թ հունիսի 13-ի N 22 որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Գեղադիր գյուղական համայնքի ղեկավարի հաշվետու համայնքային ժողովի
2013 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցավ Գեղադիր համայնքի ղեկավարի հանրությանը ներկայացվող հաշվետու ժողովը :
Մասնակցությամբ՝
Համայնքի ավագանու անդամներ

1. Ահարոն Գրիգորյանի
2. Արամ Հովհաննիսյանի
3. Գևորգ Գասպարյանի
4. Կարեն Եղիազարյանի
5. Հմայակ Մկրտչյանի

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

1.աշխատակազմի քարտուղար Թ.Մուդոյանը
2.առաջատար մասնագետ Ա.Սարգսյանը
3.1-ին կարգի մասնագետ Շ.Թադևոսյանը

Մասնակցում էին համայնքի 107 բնակիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1.Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքները հանրությանը իրազեկման մասին:

2.Ընթացիկ կամ այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ -Գեղադիր համայնքի ղեկավար Հ.Սարգսյանին

Հաշվետու ժամանակահատվածում ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ,<<Տեղական ինքնակառավարման մասին>>,<<Համայնքային ծառայության մասին>> օրենքներով և այլ իրավական ակտերով Գեղադիր համայնքի աշխատակազմը մի շարք աշխատանքներ է կատարել համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ուղղությամբ:

Բարելավվել է համայնքի ավագանու գործունեությունը,ավագանու նիստերը գումարվում են ավագանու կանոնակարգին համաձայն :

Համայնքային ծառայության աշխատանքները կատարվում են պատշաճ մակարդակով.բավարար է կազմակերպվում համայնքի քաղաքացիների ընդունելությունը,համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամների կողմից:

Իմ ամենօրյա հսկողության տակ է համայնքի ֆինանսական գործունեությունը: 2013թվականի հունիսի 1-ի վիճակով բյուջեն կատարվել է 95 տոկոսով,ֆինանսական պարտավորություններ համայնքը չունի:

2010թ. համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ, համայնքի բնակչության և բարերար Արթուր Զաքարյանի և համայնքի բնակիչների օգնությամբ վերանորոգվել է համայնքի դպրոցի շենքը:

2012թ. մասնակիորեն վերանորոգվել է համայնքի խմելու ջրագիծը:

Համայնքի փողոցները ապահովվել են գիշերային լուսամփոփներով:

Պարբերաբար կատարվում է համայնքի փողոցների աղբահանությունը:

Աշխատանքներ են կատարվում համայնքում գործող առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների հսկողության ուղղությամբ:

Վարվում են համայնքի զինապարտների գրանցամատյանները:

Համայնքի մանկապարտեզը վերանորոգվել է :Մշակույթի տուն համայնքը չունի:

Գրադարանը տեղավորված է դպրոցի շենքում,գործում է,առկա է 7732 կտոր գիրք:

Ըստ հողային հաշվեկշռի համայնքում առկա է 973,49 հա գյուղ .նշ.հողատարածք,որից վարելահող 42,12,արոտ՝251,67 հա այլ հողեր՝679,7հա:Վարձակալության է հատկացվել 21,43 հա :

Ընթացքի մեջ է համայնքի գլխավոր հատակագծի կատարման աշխատանքները. Այն կավարտվի մինչև տարեվերջ:

Համայնքի աշխատակազմի կողմից ապահովվել է համայնքի բյուջեի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակայնությունը:

Բավարար է կազմակերպվում համայնքի քաղաքաշինության աշխատանքները:

Գյուղը գազֆիկացված է, համայնքն ունի խնդիրներ էլեկտրականության սպասարկման հետ,որի ուղղությամբ աշխաըանքներ եմ տարվում:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ

1. Մուշեղ Նահապետյանը, որը համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները գնահատեց դրական և իր դժգոհությունն արտահայտեց համայնքի խմելու ջրի մատակարարման վերաբերյալ :

2. Հակոբ Եղիազարյանը նշեց, որ համայնքում ոռոգման ջուր չունի շուրջ 20 տարի:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Համայնքի բնակիչ Նիկոլ Պետրոսյանը, Բաբկեն Գրիգորյանը,Մանվել Թաթոսյանը, Արտակ Կարապետյանը առաջարկեցին համայնքի ղեկավարին՝ բարելավել աշխատանքներն համայնքի խմելու ջրի մատակարարման և ոռոգման ջրի հարցի լուծման ուղղությամբ,գյուղի փողոցներում տեղադրել նոր աղբարկղներ:

ՈՐՈՇԵՑԻՆ

1.Համայնքի ղեկավարի հաշվետվությունն ընդունել ի գիտություն,

2.Համայնքի ղեկավարին՝

1)Առաջիկայում զբաղվել և բարելավել խմելու ջրի մատակարարման հարցը:

2)Ակտիվացնել աշխատանքները համայնքի ոռոգման ջրի հարցի լուծման ուղղությամբ:

3)Համայնքի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները հասցնել ավարտին,այնպես,որ շուտով մանկատարտեզը գործի:

4) համայնքի գլխավոր հատակագիծի աշխատանքները հասցնել ավարտին:

5)Գյուղի փողոցներում ավելացնել նոր աղբարկղներ:

2.Ընթացիկ կամ այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ

Համայնքի ղեկավար Հ.Սարգսյանի հաղորդումները համայնքի աշխատակազմի ընթացիկ աշխատանքների մասին. նա նշեց, որ բավարար հիմքերի վրա է գտնվում համայնքի աշխատանքային ներքին կարգապահությունը:
Աշխատակազմի ամենօրյա աշխատանք է համարվում հարկերի հավաքագրումը,քաղաքացիների ընդունելությունների և համայնքի գործավարության կազմակերպումը:
Ամենօրյա ուշադրության կենտրոնում է համայնքի տարածքի սանիտարական մաքրության պահպանման աշխատանքները:
Նշվեց, որ համայնքի ղեկավարն զբաղվում է համայնքի մանկապարտեզի վերանորոգման հարցով,հույս է հայտնում,որ այն կգործի :

Կբարելավվի համայնքի խմելու ջրի մատակարարման աշխատանքները:

Գյուղի փողոցներում կավելացվեն նոր աղբարկղներ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդումները ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

7 հունիսի 2013թ.

Գ.Գեղադիր